ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5723-Ա « 24 » նոյեմբերի 2026թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի Հ.694-Ա ՈՐՈՇՄԱՆ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու 2026 թվականի նոյեմբերի 17-ի հ.694-Ա որոշման համաձայն՝ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող 117284000 (մեկ հարյուր տասնյոթ միլիոն երկու հարյուր ութսունչորս հազար) ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ գույքը՝ թվով 30 Kawai մակնիշի դաշնամուրները սեփականության իրավունքով անհատույց հանձնվել (նվիրվել) են Երևանի ենթակայության երաժշտական և արվեստի դպրոցներին:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ և 597-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2026 թվականի նոյեմբերի 17-ի հ.694-Ա որոշումը.

1. Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետին՝ Երևանի քաղաքապետի անունից, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Երևանի ենթակայության երաժշտական և արվեստի դպրոցների հետ կնքել թվով 30 հատ դաշնամուրների նվիրատվության պայմանագրեր, հանձնման-ընդունման ակտեր՝ համաձայն հավելվածի:
2. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետի վրա:
3. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի տեղակալ Լ. Հովհաննիսյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ